

Սիրելի հայրենակիցներ,

«Լրատու»-ի այս թիւով, վերամուտի եւ կրթական նոր տարեշրջանի մը լաւագոյն բարենադրութիւններով կը փափաքիմ մուտք գործել իւրաքանչիւր հայ տունէ ներս, յուսալով, որ բարեյաջող տարի մը կ'ունենաք՝ լեցուն դրական զարգացումներով ու իրադարձութիւններով:

Ամառնային կազդուրիչ արձակուրդներէն ետք, Սեպտեմբերի սկիզբը, երեք քաղաքներուն մէջ գործող Նարեկ Զայկական Վարժարանները լայնօրէն բացին իրենց դռները հայ աշակերտներուն դիմաց, «ՆԱՆՕՐ» Զայկական Մանկական Կեդրոնը երկրորդ տարին ըլլալով գրկաբաց ընդունեց 17 երեխաներ, իսկ Կիպրահայ գաղութը բախտաւորուեցաւ նորանշանակ Կաթողիկոսական Փոխանորդ Գերաշնորհ Տ. Նարեկ Արքեպիսկոպոսի ժամանումով: Անոր կը մաղթենք յաջողութիւն իր նոր առաքելութեան մէջ:

Կիպրահայ գաղութի զանազան կազմակերպութիւններու եւ միութիւններու գործունէութիւնը վերաշխուժացաւ վերամուտին հետ միասին եւ մինչեւ տարեվերջ իրականանալիք ձեռնարկներու շարքը բաւական ճոխ ու հարուստ է նորութիւններով: Բոլորէն կը սպասուի, կարողութեան ներած սահմաններէն ներս, մասնակից դառնալ եւ ներդրում ունենալ գաղութի հայապահպանման ծիրէն ներս տարուող աշխատանքներուն եւ ծրագիրներուն:

Գալով «ՆԱՆՕՐ» Մանկապատանեկան Պարախումբին, ուրախութեամբ կը փոխանցեմ, թէ Շաբաթ, 4 Հոկտեմբերին, 50 փոքրիկներու ներկայութեամբ եւ տասնեակ մը նորեկներու արձանագրութեամբ, օրինաւոր կերպով վերսկսան պարախումբի փորձերը, ղեկավարութեամբ հայրենի վաստա-

կաւոր պարուսոյց Պրն. Պետրոս Ղարիպեանի, Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի սրահէն ներս:

Իսկ, Հինգշաբթի, 23 Հոկտեմբեր 2014-ին, Առաջնորդարանի «Իւթիւճեան» սրահին մէջ տեղի պիտի ունենայ շահեկան դասախօսութիւն մը, համագործակցութեամբ Կիպրոսի Պետական Համալսարանին, որուն մասին թերթիկ մը ներփակած ենք «Լրատու»ի այս թիւով: Դասախօսութիւնը կը վերաբերի Սուրիահայութեան երկնտանքին, մնա՞լ, թե՞ հեռանալ իրենց երկար տարիներու ապաստանէն, որ մեզի պիտի փոխանցէ Հայաստան ծնած, սակայն Սուրիա հասակ նետած եւ ուսանած, այժմ՝ դոկտորականի թեկնածու Արմենակ Թոքմաճեանը: Հետեւաբար, իւրաքանչիւր հայ անհատ կը սպասենք, որ իր ներկայութեամբ գնահատէ հայ երիտասարդ ուսումնասիրողի մը աշխատասիրութիւնը:

Ինչպէս արդէն տեղեակ էք, Երեսփոխանական Գրասենեակը, իր տարեկան Կիպրոս-Հայաստան մշակութային յարաբերութեան ծիրէն ներս, այս տարուան համար Կիպրոս հրաւիրած է Ինգա եւ Անուշ Արշակեան քոյրերը՝ միայն մէկ ելոյթի համար: Ելոյթը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 15 Նոյեմբեր 2014-ին, Ստրովոլոսի Քաղաքապետարանի սրահին մէջ, երեկոյեան ժամը 19:00-ին, որու ընթացքին, քանի մը պարերով, իր մասնակցութիւնը պիտի բերէ նաեւ Համագայինի «Սիփան» պարախումբը: Կը հաւատանք, որ խումբերամ բազմութեամբ ներկայ պիտի գտնուիք այս երեկոյին, ինչպէս մեր գրասենեակի կազմակերպած բոլոր ելոյթները կը վկայեն, վայելելու շնորհալի քոյրերուն բարձր ու մաքուր հայկական արուեստը: Տոմսերու վաճառքը ընթացքի մէջ է եւ կը սպասուի որ անոնք ամբողջութեամբ սպառին:

Նախօրօք շնորհակալութիւն ձեր քաջալերանքին համար եւ փառք ու պատիւ հայ մշակոյթը վառ պահողներուն:

Վարդէս Մահտեսեան

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ

ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

«Լրատու»ի այս թիւով, «Ծանօթանանք Կիպրոսի Հանրապետութեան Օրէնքներուն» բաժինով, հակիրճ ձեւով կը փոխանցենք Կիպրոսի Հանրապետութիւն մուտք գործելու եւ ժամանակաւոր բնակութիւն հաստատելու դիմումներու ձեւերու փոփոխութեան եւ պայմաններուն մասին, որոնք ի զօրու դարձան 29.09.2014-էն սկսեալ: Կը խնդրենք ուշադրութեամբ կարդալ եւ ի հարկին ու յաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար դիմել Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունք:

Գալով երկրէն ներս տիրող անգործութեան պատճառով առ այժմ Կեցութեան եւ Աշխատանքի հրաման չունեցող մեր հայրենակիցներուն կը թելադրենք, փոխանակ անօրէն մնալու, անհրաժեշտ քայլերու դիմել, ապահովելու զոնէ մէկ տարուան որպէս այցելու ժամանակաւոր Կեցութեան հրաման, այլապէս՝ պէտք եղած դասաւորումները կատարել լքելու երկիրը:

Հպատակութիւն

Սեպտեմբեր ամսուան ընթացքին, երկու հայրենակիցներ, որոնք Կիպրոսի մէջ երկար տարիներ օրինաւոր բնակութիւն հաստատած էին, ստացան հպատակութիւն:

Նարեկ Հայկական Վարժարաններու

2014 տարեշրջանի շրջանաւարտներուն Հայաստան այց

Կիրակի, 13 Յուլիս 2014-ին, հինգերորդ յաջորդական տարին ըլլալով, Նարեկ Հայկական Վարժարաններու շրջանաւարտները, ընկերակցութեամբ երկու ուսուցիչներու՝ Պրն. Եղիա Գայայեանի եւ Պրն. Պանայոտիս Հիմոնիտիսի, երկու շաբթուան համար մեկնեցան Հայաստան: Ըստ



աւանդութեան, այս շրջապտոյտը Պրն. Մահտեսեանին նուէրն է շրջանաւարտներուն, որ կ'իրականանայ Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութեան «Արի Տուն» ծրագրի ծիրէն ներս:

Այս տարուայ խումբը, հիւրընկալ ընտանիքներու հետ կապուած, կարգ մը անյարմարութիւններ ունեցաւ Հայաստանի մէջ, սակայն պէտք եղած միջամտութիւններէն եւ դասաւորումներէն ետք, հարցերը լուծուեցան ու անոնք տեսարժան վայրերու այցելութեան յիշատակներով վերադարձան Կիպրոս: Ընկերակցող ուսուցիչները Հայաստանէն վերադարձին իրենց տպաւորութիւնները փոխանցեցին Պրն. Մահտեսեանին եւ ընդգծեցին թէ բարելաւումի կարիքը կայ, հակառակ այն իրողութեան որ «Արի Տուն» ծրագիրը բժախնդրութեամբ պատրաստուած էր: Այս տեղեկութիւններու լոյսին տակ, Պետական Ներկայացուցիչը իր գրաւոր առաջարկները եւ թելադրանքները յղեց Սփիւռքի Նախարարութեան:

«ՆԱՆՕՐ» Հայկական Մանկական Կեդրոն



Երկուշաբթի, 1 Սեպտեմբեր 2014ին, առաւօտեան ժամը 7:00ին, երկրորդ տարին ըլլալով իր դռները բացաւ «ՆԱՆՕՐ» Հայկական Մանկական Կեդրոնը Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի շրջափակէն ներս:

Ինչպէս գիտէք, Կեդրոնը կը գործէ առաւօտեան ժամը 7:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00-ը, հոգածութեան տակ ունենալով 4 ամսականէն մինչեւ 3 տարեկան երեխաներ: Առ այժմ, Կեդրոնը ունի 17 երեխաներ, մասնագիտացած 2 լիաժամ եւ 2 մասնաժամ ուսուցչուհիներով:

Ուրախութեամբ կը փոխանցենք, որ երիտասարդ ծնողներ, ականատես ըլլալով «ՆԱՆՕՐ»ի իւրայատուկ հոգածութեան պայմաններուն եւ ջերմ մթնոլորտին, բարձր կը գնահատեն այս եզակի նախաձեռնութիւնը: Նշենք, որ այս տարի Կեդրոնի երեխաներու թիւը աճ արձանագրած է եւ արդէն իսկ գոյութիւն ունի նորածին երեխաներու սպասողական ցանկ մը:

Ուրբաթ, 26 Սեպտեմբեր 2014-ին, Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տիկին Մակի Մահտեսեանին, այցելեց «ՆԱՆՕՐ» Հայկական Մանկական Կեդրոն:

Յիշեցնենք թէ «ՆԱՆՕՐ» Հայկական Մանկական Կեդրոնը ոչ հասութեամբ հաստատութիւն մըն է եւ կը կառավարւի հինգ հոգիոց նշանակուած Վարչական Խորհուրդի մը կողմէ:

Կիպրահայ գաղութի կեանքէն

Չորեքշաբթի, 3 Սեպտեմբեր 2014-ին, Պետական Ներկայացուցիչը, ընկերակցութեամբ Ազգային Իշխանութեան Երեսփոխանական Ժողովի ատենապետ Պրն. Սեպուհ Դաւիթեանի ու Քահանայ Հայրերուն, Լառնաքայի օդակայանին մէջ դիմաւորեց Կիպրոսի Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Գերաշնորհ Տէր Նարեկ Արքեպիսկոպոսը: Յաջորդ օրը, բարի գալուստի գիր մը յղելով, Պրն. Մահտեսեան Սրբազան Հօր փոխանցեց իր պատրաստակամութիւնը միշտ անոր կողքին ըլլալու եւ օժանդակելու Ազգային Իշխանութեան բարօրութեան ու վերելքին գծով տարուող բոլոր աշխատանքներուն:

Նոյն օրը երեկոյեան, Պետական Ներկայացուցիչը եւ իր տիկինը, Նիկոսիոյ Համալսարանի Cine Studio սրահին մէջ, ներկայ գտնուեցան «Թեւանիկ» ֆիլմի ցուցադրութեան, որ կազմակերպուած էր Համազգայինի Կիպրոսի «Օշական» մասնաճիւղին կողմէ:

Երկուշաբթի, 8 Սեպտեմբեր 2014-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, իրենց բնակարանին մէջ բարի գալուստի ճակչերոյթ մը տուին ի պատիւ Նարեկ Սրբազանին, ներկայութեամբ գաղութի Հոգեւոր հայրերուն, Երեսփոխանական Ժողովի ու Ազգային Վարչութեան ատենապետներուն:

Կիրակի, 28 Սեպտեմբեր 2014-ին, Պետական Ներկայա-

ցուցիչն ու տիկինը, ներկայ գտնուեցան Լիմասոլի Ս. Գեորգ եկեղեցույ անուանակոչութեան տօնին առիթով մատուցուած Ս. Պատարագին եւ մատաղօրհնութեան, հանդիսապետութեամբ Գերաշնորհ Տ. Նարեկ Արքեպիսկոպոսի, որ իր անդրանիկ պատարագը մատուցեց եւ պատգամը փոխանցեց Լիմասոլահայութեան: Ապա, տեղի ունեցաւ ընդունելութիւն ի պատիւ Սրբազան Զօր, Լիմասոլի Նարեկ Վարժարանի սրահին մէջ, որու ընթացքին գաղութի անդամները առիթը ունեցան ծանօթանալու նորանշանակ Սրբազանին հետ:


Երեքշաբթի, 30 Սեպտեմբեր 2014-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, ներկայ գտնուեցան Աւագ Արիապետ Յարութիւն Անմահունիի «Մարշալ Բաղրամեան» շքանշանի պարգևատրման արարողութեան, ձեռամբ Զայաստանի Պաշտպանութեան Նախարարութեան կցորդ Գնդապետ Սամուէլ Ռամազեանի, որ տեղի ունեցաւ Առաջնորդարանի «Վ. Իւթիւճեան» սրահին մէջ:



«Գործնական Թելադրանքներ Աշխատանք գտնելու Եւրոպական Միութեան մէջ»



Կազմակերպութեամբ Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչի Գրասենեակին եւ համագործակցութեամբ Կիպրոսի Եւրոպական խորհրդարանի Գրասենեակին ու Եւրոպական Յանձնաժողովի Ներկայացուցչութեան, Ուրբաթ, 19 Սեպտեմբեր 2014-ին, երեկոյեան ժամը 18:00-ին, Առաջնորդարանի «Վ. Իթիւճեան» սրահին մէջ, տեղի ունեցաւ շահեկան միջոցառում «Գործնական թելադրանքներ աշխատանք գտնելու Եւրոպական Միութեան մէջ» նիւթով: Այս ձեռնարկին ներկայ գտնուեցան շուրջ 80 անհատներ, որոնց մէջ առաջին անգամ ըլլալով նշմարելի էր մեծ թիւով երիտասարդներու ներկայութիւնը, նկատի ունենալով երկրէն ներս տիրող տնտեսական իրավիճակը եւ անգործութեան բարձր տոկոսը: Ձեռնարկին ներկայ էր նաեւ Նարեկ Սրբազան:



Բարի գալուստի խօսքով ելոյթ ունեցաւ Պրն. Վարդէս Մահտեսեան, որմէ ետք, Եւրոպական Խորհրդարանի Կիպրոսի Գրասենեակի պատասխանատու Տիկին Ալեքսանտրա Աթալիտուն իր խօսքը փոխանցեց ներկաներուն: Հետաքրքրական ելոյթներ ունեցան Պրն. Սիխալիս Սթիլհանուն, որ կը ներկայացնէր Եւրոպական Յանձնաժողովի Ներկայացուցչութիւնը Կիպրոսի մէջ եւ Տիկին Մարթա Նելկլուսը, որ կը ներկայացնէր Եւրոպական Յանձնաժողովի Կիպրոսի Ներկայացուցչութեան Թարգմանութեան Բաժանմունքի Ընդհանուր Տնօրէնութիւնը: Տեղի ունեցաւ հաճելի զրոյց եւ առիթը տրուեցաւ ներկաներուն միտքեր փոխանակելու:

Այս շատ շինիչ ձեռնարկը վերջ գտաւ հիւրասիրութեամբ, գոհունակութիւն ներշնչելով շատ մը երիտասարդներու:

Պաշտօնական մակարդակի հանդիպում



Երեքշաբթի, 30 Սեպտեմբեր 2014-ին, Պետական Ներկայացուցիչը խորհրդարանի իր գրասենեակին մեջ, հանդիպում մը ունեցաւ նորանշանակ Կաթողիկոսական Փոխանորդ Գերաշնորհ Տէր Նարեկ Արքեպիսկոպոսի հետ: Ապա, Սրբազան Հայրը Պրն. Մահտեսեանի ընկերակցութեամբ, ծանօթացման հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի խորհրդարանի Նախագահ Պրն. Եաննակիս Օմիրուի հետ:

Ցաւակցագիր

Ուրբաթ, 8 Օգոստոս 2014-ին, Պետական Ներկայացուցիչը երկրէն դուրս գտնուելուն պատճառով, ցաւակցագիր մը յղեց Սեպուհ Աբգարեանի մեծ ընտանիքին ու հարազատներուն, յայտնելով իր խոր վշտակցութիւնը հայ մշակոյթի արժանաւոր արուեստագէտին մահուան տխուր առիթով:

Շնորհաւորագիր

Երեքշաբթի, 22 Յուլիս 2014-ին, Պետական Ներկայացուցիչը նամակով մը շնորհաւորեց Միջին Արեւելքի Աստուածաշունչի Ընկերութեան խորհուրդի Ատենապետ Դոկտ. Զրայր Գեպեճեանը, ԶԶ Սփիւռքի Նախարարին ձեռամբ «Մայրենիի Դեսպան» մետալով պարգեւատրուելուն առիթով:

Հինգշաբթի, 25 Սեպտեմբեր 2014 թուակիր գիրով մը, Պրն. Վարդգէս Մահտեսեան շնորհաւորեց «Կիպրահայեր» ելեկտրոնային թերթի գլխաւոր խմբագիր եւ Հայ Դատի յանձնախումբի ատենապետ Սիմոն Այնճեանը, ԶԶ Նախագահին կողմէ «Մովսէս Խորենացի» մետալով պարգեւատրուելուն ուրախ առիթով:

Երկուշաբթի, 29 Սեպտեմբեր 2014-ին, Պետական Ներկայացուցիչը յատուկ գիրով մը, շնորհաւորեց «Ազատ Խօսք» ելեկտրոնային թերթի գլխաւոր խմբագիր Տիկին Երան Գուլյումճեանը, Սփիւռքի Նախարար Տիկին Զրանուշ Յակոբեանի ձեռամբ «Մայրենիի Դեսպան» շքանշանով պարգեւատրուելուն համար:

Երախտագիտութեան գիր

Ուրբաթ, 26 Սեպտեմբեր 2014-ին, Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան, երախտագիտութեան յատուկ գիր մը յղեց Կիպրոսի մէջ Յունաստանի Դեսպան Վասիլիս Պապանտեաննուին, փոխանցելով իր ու Կիպրահայութեան գոհունակութիւնը եւ շնորհաւորելով Յունաստանի Խորհրդարանը, 9 Սեպտեմբեր 2014-ին, Ցեղասպանութիւններու Ժխտողականութիւնը քրեականացնող օրէնքի որդեգրման ուրախ առիթով՝ ներառեալ Հայկական Ցեղասպանութիւնը: Ան բարձր գնահատեց Յունաստանի Կառավարութեան այս հերոսական քայլը յոյս յայտնելով, որ ուրիշ երկիրներ ալ կը հետեւին Յունաստանի օրինակին:



Ծանօթանանք Կիպրոսի Հանրապետության Օրէնքներուն

Ներքին գործոց նախարարութիւն
Օտարահպատակներու եւ Ներգաղթի
Բաժանմունք

Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունքը կը յայտարարէ, թէ 29.09.2014-էն սկսեալ, յօդուած 18ՓՀ(7) Օտարահպատակներու եւ Ներգաղթի Օրէնքի (գլուխ 105), ինչպէս նաեւ Օտարահպատակներու եւ Ներգաղթի 4-րդ յօդուածի (Amending) (No.2) օրէնքի [N129(I)2014, O.G. Annex.I(I) No. 4456] ուժի մէջ կը մտնեն, ինչ կը վերաբերի երրորդ աշխարհի քաղաքացիներու հետեւեալ խմբաւորումներուն համար:-

- Անոնք որ կը բնակին կամ մուտք պիտի գործեն Հանրապետութիւն աշխատանքի համար (employment purposes)
- Անոնք որ կը բնակին կամ մուտք պիտի գործեն Հանրապետութիւն որպէս այցելու (visiting purposes)

Հետեւաբար, վերեւ նշուած օրէնսդրութեան որդեգրման

լոյսին տակ, Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունքը վերատեսութեան ենթարկեց վերել նշուած խմբաւորումներու կեցութեան հրամաններու տուչութեան գործընթացը:-

Ղիմումնագիրներու Յանձնում

Իւրաքանչիւր խմբաւորումի համար հետեւեալ նոր ղիմումի ձեւերը ուժի մէջ են: -

<u>Խմբաւորում</u>	<u>Ղիմումի Ձեւ</u>
Տարեկան Հրաման (Single Permit) - Վարձատրութեամբ աշխատանք (Remunerated Employment)	MGEN1
Տարեկան Հրաման (Single Permit) - Առտնին աշխատանք (Domestic Employment)	MDW1
Այլ Աշխատանք (Other Employment) - Անձնական աշխատանք եւ որոշ եղանակի աշխատանք (self-employment and seasonal employment)	MNSP1
Կիպրացիի ընտանեկան անդամներ-աշխատանքի (Family Members of a Cypriot - employment)	MCYE1
Կիպրացիի ընտանեկան անդամներ-այցելուներ (Family Members of a Cypriot - visitors)	MCYV1
Այցելուներ (Visitors)	MVIS1

Վերոնշեալ ղիմումի ձեւերը պիտի օգտագործուին հետեւեալ հրամաններու տուչութեան համար: -

- Մուտքի Ջրաման (Entry Permit), Արձանագրության (Registration) եւ ժամանակաւոր Կեցութեան Ջրաման (Temporary Residence Permit)
- Մուտքի Ջրաման եւ ժամանակաւոր Կեցութեան Ջրաման
 - ժամանակաւոր Կեցութեան Ջրաման եւ Արձանագրութիւն
 - ժամանակաւոր Կեցութեան Ջրաման
 - ժամանակաւոր Կեցութեան Ջրամանի նորոգութիւն
 - Կեցութեան Ջրամանի նորոգութիւն՝ գործատէր փոխելու պատճառով

Յանձնումի ժամանակ, բոլոր վերել նշուած դիմումագիրներուն պէտք է կցուած ըլլան անհրաժեշտ փաստաթուղթեր, որոնց ցանկը կարելի է ապահովել դիմումի ձեւին հետ միասին:

Կարելոր նշումներ

1. Երրորդ աշխարհի քաղաքացիները, որոնք Մուտքի Ջրամանով (Entry Permit) մուտք գործած են Հանրապետութիւն, 7 օրուան ընթացքին եւ անձամբ ներկայանալով, նոր դիմում մը եւս պէտք է յանձնեն յաւելեալ փաստաթուղթերով, ինչպէս նաեւ նկարի, մատնահետքերու եւ ստորագրութեան համար: Նշենք, թէ առնուած մատնահետքերը չեն կրնար գործածուիլ այլ նպատակներով առանց անհրաժեշտ լիազօրութիւններու թէ՛ կիպրական եւ թէ օտար իշխանութիւններու կողմէ, եւ կեցութեան հրամանի տուչութենէն 48 ժամ ետք, անոնք կը ջնջուին Օտարահպատակներու արձանագրութեան համակարգէն կամ տոմարէն:

2. Նոր Կեցութեան Ջրամանները պիտի տրուին համան-

ման քարտի (uniform format) ձեւով, որ պիտի պարունակէ օտարահպատակին կենսաչափական տուեալները (նկար, մատնահետքեր եւ ստորագրութիւն):

3. Բոլոր անոնք, որոնք Կեցութեան Յրամանի դիմումներ ներկայացուցած են 29.09.2014-էն առաջ եւ տակաւին դիմումները քննութեան տակ են, պարտին մինչեւ 29.11.2014 «Լրացուցիչ Դիմում» ներկայացնել ըստ իրենց կարգավիճակին, անձնապէս ներկայանալով նկարի, մատնահետքերու եւ ստորագրութեան համար՝ վճարելով €10: Այլապէս 29.11.2014-էն ետք, անոնց ներկայացուցած նախկին դիմումը անվաւեր պիտի նկատուի:

4. Սակագիններու գծով ալ որոշ փոփոխութիւններ եղած են, որոնք պիտի չներկայացնենք ձեզ չճանաբեռնելու համար:

Ընդգծենք, թէ վերոնշեալ օրէնքի թարգմանութիւնը բառացի ու ամբողջական չէ, այլ հակիրճ ամփոփում մը միայն, ուստի կը յանձնարարենք որ իւրաքանչիւր հայրենակից դիմէ իր քաղաքի Ներգաղթի եւ Օտարահպատակներու Բաժանմունք, յաւելեալ մանրամասնութիւններ եւ յստակացումներ ստանալու համար: Մենք պատասխանատու չենք որեւէ վրիպումի կամ ոչ յստակ տեղեկութեան պարագային:

Թարմացնելու համար «Լրատու»ի
 հասցեացանկը, Կիպրահայ գաղութի
 անդամներին եւ մեր հայրենակիցներին կը
 խնդրուի կապ հաստատել Երեսփոխանական
 Գրասենեակին հետ հեռաձայնելով 22454540
 թիվին, ճշդելու համար բնակարաններու
 հասցէները եւ կամ տեղեակ պահելու այլ
 փոփոխութիւններու մասին:

Շնորհակալութիւն

ԿԻՊՐԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos
 Յեռախօս 22- 45 45 40, Յեռատիպ 22- 42 46 42
 Ել. Հասցէ office@armenianmp.com
 Ոստայնէջ՝ <http://www.armenianmp.com>

Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia
 Յեռախօս 22- 40 72 02, Յեռատիպ 22- 40 74 42
 Ել. Հասցէ vmahdessian@parliament.cy